ՀՈԲԵԼՅԱՆ

# ԴՊՐՈՑԻ 80 ՏԱՐՎԱ ՓԱՌԱՊԱՆԾ ՈՒՂԻՆ

*Հունիսի 11-ին, Թբիլիսիի Նոդար Դումբաձեի անվան պատանի հանդիսատեսի պետական թատրոնում, հայ ու վրաց հանրությունը ներկա գտնվեց, 1937 թվականին՝ Թբիլիսիի կենտրոնից դեպի Հավլաբար տանող Բարաթաշվիլի կոչվող կամրջի մոտակայքում բացված, հայկական թիվ 104 դպրոցի հոբելյանական տոնահանդեսին:*

*80 տարի առաջ՝ քառահարկ դպրոցը մայրաքաղաքի ամենաժամանակակից շինությունն էր համարվում: Այն կառուցվել էր XV դարի Եռագմբեթ Վանք առաջնորդանիստ եկեղեցու տեղում, որը քանդվեց խորհրդային կարգերի հակակրոնական քաղաքականության հետեւանքով:*


ԻՐԻՆԱ ԺԱՄԿՈՉՅԱՆ




...Եկել էր պատշաճ ժամը՝ հետադարձ հայացք գցելու եւ վերագնահատելու կրթօջախի՝ 80 տարիների վերելքներով ու վայրէջքներով բովանդակված, դժվարին ու պատվավոր ճանապարհը: Անհնար էր այդ վերագնահատումը ուղեկցել առանց կարոտի, առանց հուշերի, առանց երախտիքի ու բարեմաղթանքի, ինչով եւ տոգորվեցին բոլոր ելույթները:

Ներկաներին ողջունում է դպրոցի տնօրեն Իրինա Ժամկոչյանը: Ոչ առանց հպարտության՝ նա ուրվագծեց դպրոցի առանձնահատկությունները, հինավուրց կրթօջախի՝ սերնդե-սերունդ փոխանցվող ուսանելի ավանդույթները, մեծերից եկած ուսուցչական հարուստ փորձը, որն օրըստօրե հարստանում է՝ մեր երկրում՝ ժամանակի մարտահրավերների թելադրած կրթական բարեփոխումներով: Ուսումնական հիմնարկի առանցքային արժանիքը համարվեց ուսուցչական բարձրորակ կոլեկտիվը, որը դաստիարակում է այն ճշմարիտ հայրենասերներին, ովքեր սիրում են Վրաստանը եւ չեն մոռանում, որ հայ են, որ գիտեն իրենց ազգի պատմությունն ու սիրով պահպանում են ազգային ավանդույթները:

Վրաստանի գիտության ու կրթության նախարարության մոնիտորինգի եւ համակարգման վարչության պետի պաշտոնակատար Էկատերինե Խուցիշվիլին, նախարարության անունից, շնորհավորեց հոբելյար-դպրոցին: Հյուրերի շարքում նկատելով Թբիլիսիի վրացական, ադրբեջանական, ռուսական դպրոցների ներկայացուցիչների՝ ընդգծեց, որ մեր բազմազգ ու հանդուրժողական Վրաստանում, մինչ օրս պատվով պահպանվում ու է'լ ավելի են ամրապնդվում վրացիների եւ տարբեր էթնիկ ներկայացուցիչների բարեկամության ու եղբայրության՝ մեր պապերից եկող ավանդույթները, որոնք մանկավարժական աշխարհի շնորհիվ ներարկվում են աճող սերունդներին:

Թբիլիսիի «Սուրբ Էջմիածին» եկեղեցու սարկավագ Գեւորգ Անտոնյանն ընթերցեց Վիրահայոց թեմի առաջնորդ Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանի շնորհավորական ուղերձը, որում, մասնավորապես, արժեւորված էր թիվ 104 դպրոցի հայապահպան գործունեությունը, սաների մեջ՝ մայրենիի ու պետական լեզուների, Հայաստան ու Վրաստան աշխարհների հանդեպ սիրո ու նվիրումի ներարկումը:

Վրաստանի խորհրդարանի պատգամավոր Ռուսլան Պողոսյանն իր շնորհավորական խոսքում ընդգծեց դպրոցի տնօրեն Իրինա Ժամկոչյանի ներդրած ավանդը՝ դպրոցի մանկավարժական կոլեկտիվի արգասաբեր աշխատանքի ու ակնհայտ ձեռքբերումների ճանապարհին:

Ողջունելով ներկաներին՝ Թբիլիսիի Սակրեբուլոյի անդամ Ռիմա Բերաձեն նրանց հիշեցրեց «Վրացական երազանքի» կողմից անհրաժեշտություն դիտված Ազգային փոքրամասնությունների խորհրդի ստեղծումը, որը կոչված է կազմակերպելու համատեղ փոխհարաբերությունները եւ ծագած խնդիրների լուծումը: Ընդգծեց, որ պետությունն ամեն ինչ անում է՝ կրթված, զարգացած, նախաձեռնող երիտասարդություն աճեցնելու եւ՝ դրանով՝ մեր երկրին անհրաժեշտ հզոր էկոնոմիկա ապահովելու համար, ինչին եւ ծառայում են այսօր իրագործվող կրթական ռեֆորմները:

«Վրաստան» թերթի գլխավոր խմբագիր Վան Բայբուրթյանը կրթօջախի՝ ուրախալի ձեռքբերումների նախապայմաններից մեկը, մասնավորապես, դիտեց՝ Եռագմբեթ Վանքով սրբագործված հոգեւոր տաճարի վայրում մեկ ա'յլ հոգեւոր օջախի՝ թիվ 104 դպրոցի գործունեությունը, որը նա անվանեց գիտության տաճար: Նա կարեւորեց այդ մեծ խորհուրդ բովանդակող նախաձեռնությունը, եւ հույս հայտնեց, որ գիտության ա'յս տաճարը կլինի նույնքան երկարակյաց ու արգասաբեր, որքան նախորդն էր:

Իր ելույթում, թիվ 104 դպրոցի նախկին տնօրեն (2005-2011թթ.), ներկայումս՝ Վրաստանի կրթության եւ գիտության նախարարության ազգային ուսումնական ծրագրերի վարչության ոչ վրացալեզու դպրոցներում ուսումնական նյութերի ներդրման փորձագետ Կարինե Մանուկյանն առանձնակի ընդգծումով ներկաներին հիշեցրեց բազմամյա կրթական հաստատության երախտավորների՝ իրենց ողջ կյանքը ազգապահպանության եւ սերունդներ դաստիարակելու գործին ծառայեցրած մանկավարժներ Անել Ահարոնյանի, Ելենա Իսպենդիարովայի, Արշալույս Ավագյանի, ապա՝ Ամալյա Գեւորգյանի, Երվանդ Չախալյանի, Վեներա Սաֆարյանի, Սեդա Դիլբարյանի, Նորայր Բաղդասարյանի անուրանալի ավանդը: Նրանց ձեռքի տակ աճած շրջանավարտների՝ գրական մշակույթի նվիրյալներ դարձած գրականագետներ Մխիթար եւ Էդվարդ Ջրբաշյանների, գրող Շահեն Թաթիկյանի եւ ուրիշների մասին:

Սիրո, ակնածանքի եւ երախտիքի բուռն զգացումներով ուղեկցվեց դպրոցի շրջանավարտ, ներկայում՝ Մոսկվայի մարզի՝ Իրավունքի եւ կառավարման միջազգային ինստիտուտի ռեկտոր, իրավագիտության դոկտոր-պրոֆեսոր Սուրեն Մկրտչյանի ելույթը: Նա իր մաղթանքներն արտահայտեց սեփական բանաստեղծությամբ:

Իր ողջույնի խոսքում՝ Վիրահայոց թեմի «Հայարտուն» կրթա-մշակութային կենտրոնի տնօրեն Լեւոն Չիդիլյանը հավաքվածներին սթափության կոչեց, եւ հույս հայտնեց, որ թիվ 104 դպրոցի ակնհայտ ձեռքբերումները կավելացնեն առաջին դասարանցիների քանակը՝ քաղաքի հայկական դպրոցներում:

Հոբելյար դպրոցի շրջանավարտ, մանկավարժ Մարինե Բոստանջյանն իր ելույթում ասաց.

- Ես ռուսական դպրոցի 6-րդ դասարանից եմ եկել այս դպրոց, այն ավարտելով՝ ստացել բուհական հայկական կրթություն, դարձել՝ հայոց լեզվի ու գրականության ուսուցիչ, ու այսօր, իմ երեք զավակներին նույնպես կրթության եմ տվել հարազատ դպրոցում: Ի դեպ, ավագ դուստրս հաջողությամբ ուսանում է Թբիլիսիի պետհամալսարանում եւ ոչնչով ետ չի մնում համակուրսեցիներից:

Ավելացնենք, որ հանդիսույթը ուղեկցվեց դպրոցի շնորհալիների գեղարվեստական ելույթներով: Իրենց տպավորիչ երգով, պարով, ասմունքով բուռն ծափերի արժանացան դպրոցի «Հարազատ ձայներ» երգչախումբը (գեղ. ղեկ.՝ Մարինա Արշակյան), «Վանք» պարային խումբը (պարուսույց՝ Լիանա Կաշավանիձե), մենակատարներ Անի Թորոսյանը. Աննա Սիրունյանը, Աիդա, Անրի, Ալեքս Բազոյանները, Աննա Աղաջանյանը, Գարրի Աբրահամյանը, Աղունիկ Իսրայելյանը, Աննա Անանովան, դպրոցի պատմությունը հայերեն ու վրացերեն ներկայացնող Լիզա Թորոսյանն ու Լիանա Մարգարյանը:

Դպրոցի, 80-ամյա հոբելյանին նվիրված, տոնակատարությանը մասնակցեցին պետական պաշտոնյաներ, Վրաստանի կրթության ու գիտության նախարարության, Վրաստանում Հայաստանի դեսպանության, Թբիլիսիի հայ մշակութային օջախների ներկայացուցիչներ, վրացական, ռուսական, ադրբեջանական կրթօջախների մանկավարժներ, հոբելյար դպրոցի ուսուցիչները, տարբեր տարիների շրջանավարտները, աշակերտները, ծնողները...

*ՋՈՒԼԻԵՏԱ ԲԱԴԱԼՅԱՆ*

ՏԱՐԵԴԱՐՁ

# ԲՈԼՆԻՍԽԱՉԵՆՑԻ ՀԵՐՈՍԸ



***Հունիսի 22-ին լրանում է՝ Խորհրդային Միության վրա ֆաշիստական Գերմանիայի ուխտադրուժ հարձակման 76-րդ տարեդարձը: 1418 օր ու գիշեր տեւած գոտեմարտերում՝ «դարչնագույն ժանտախտի» դեմ պայքարում իրենց կյանքը զոհաբերեցին միլիոնավոր մարդիկ: Միայն Վրաստանից ու Հայաստանից զորակոչված, գրեթե, մեկուկես միլիոնից 700 հազարը զոհվեց մարտերում:***

Այդ աշխարհամարտում տարած հաղթանակում իրենց համեստ ավանդն են ներդրել նաեւ Բոլնիսիի շրջանի Բոլնիս-Խաչեն գյուղի բնակիչները: Խաչենցի ավելի քան 400 հայրենասերներ, ռազմաճակատում կենաց-մահու կռիվ էին մղում թշնամու դեմ: Նրանցից 140-ը իրենց կյանքը զոհաբերեցին՝ հայրենիքի ազատագրման գործին: Շատերն արժանացան տարբեր կոչումների ու պարգեւների: Իսկ նրանցից մեկը՝ Ապավեն Ռոստոմյանը, արժանացել է Խորհրդային Միության հերոսի կոչման:

Ապավեն Ռոստոմյանը ծնվել էր 1905 թվականին, Բոլնիս-Խաչենում: 1941թ., երբ սկսվեց Հայրենական պատերազմը, Ապավենը զորակոչվեց գործող բանակ, մասնակցեց կռիվներին: Մարտերից մեկում նա վիրավորվեց, բայց, ապաքինվելուց հետո, կրկին վերադարձավ զորամաս:

1945թ. հունվարին, Լեհաստանի Ժարկի քաղաքի շրջակայքում, համառ մարտեր էին մղվում: Կռվին մասնակցում էին նաեւ Խարկովյան 15-րդ գվարդիական դիվիզիայի 44-րդ գնդի մարտիկները: Սերժանտ Ռոստոմյանի ջանքերով՝ շարքից դուրս է գալիս թշնամու գնդացրային անձնակազմը, սպանվում են քսան զինվոր ու սպա: Սակայն, մարտի մեջ են մտցվում թշնամու նոր ուժեր, նոր գնդացիր: Ապավեն Ռոստոմյանն ընդունում է ճակատագրական որոշում՝ լռեցնել թշնամու գնդացիրը: Վաշտի հրամանատարից ստանալով թույլտվություն՝ նա սողալով մոտենում է թշնամու հրակնատին, եւ՝ այն փակում սեփական մարմնով՝ հնարավորություն տալով վաշտին առաջ շարժվելու:

1945թ. ապրիլի 10-ին հրապարակվեց ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության հրամանագիրը՝ Ապավեն Վասիլի Ռոստոմյանին հետմահու Խորհրդային Միության հերոսի կոչում շնորհելու մասին:

***ՄԵԽԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ***

***Բոլնիսիի մունիցիպալիտետի Բոլնիս-Խաչենի հանրային դպրոցի տնօրեն***


**ՀՐԱՎԻՐՈՒՄ ԵՆՔ ՄԵԶ ՄՈՏ ՍՈՎՈՐԵԼՈՒ ՏԵՐՆՈՊՈԼԻ ԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԵՐԵՎԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ**



**Երեւանյան մասնաճյուղը հայտարարում է 2017-2018 ուսումնական տարվա ընդունելություն հետեւյալ մասնագիտությունների եւ մասնագիտացումների գծով.**

* ՖԻՆԱՆՍՆԵՐ (Բանկային գործ)
* ՖԻՆԱՆՍՆԵՐ (Մաքսային գործ)
* ՀԱՇՎԱՌՈՒՄ ԵՎ ՀԱՐԿՈՒՄ
* ՄԵՆԵՋՄԵՆԹ (Միջազգային մենեջմենթ)
* ՄԵՆԵՋՄԵՆԹ (Բիզնեսի կառավարում)
* ՏՈՒՐԻԶՄ (Տուրիստական բիզնեսի կառավարում)
* ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ ԵՎ ՑԱՆՑԵՐ

Երեւանյան մասնաճյուղն ունի պետպատվեր (անվճար) տեղեր, որոնք հատկացվում են Ուկրաինայի կրթության եւ գիտության նախարարության կողմից:

Մասնաճյուղում ուսուցումն իրականացվում է բակալավրի եւ մագիստրոսի կրթական որակավորման աստիճաններով:

Բակալավրիատ.

* Առկա կրթաձեւ - 4 տարի ուսման տեւողություն
* Հեռակա կրթաձեւ - 4 տարի ուսման տեւողություն:

Մագիստրատուրա.

* ՀԱՇՎԱՌՈՒՄ ԵՎ ՀԱՐԿՈՒՄ մասնագիտություն

Առկա կրթաձեւ - 1 տարի 6 ամիս

Հեռակա կրթաձեւ - 1 տարի 6 ամիս:

Երեւանյան մասնաճյուղում գործում է նաեւ քոլեջ՝ առկա կրթաձեւով հետեւյալ մասնագիտություններով.

* Հաշվապահական հաշվառում - 3 տարի ուսման տեւողությամբ
* Ֆինանսներ եւ վարկ - 3 տարի ուսման տեւողությամբ
* Համակարգչային համակարգերի եւ ցանցերի սպասարկում - 4 տարի ուսման տեւողությամբ:

Շրջանավարտները ստանում են Տերնոպոլի ազգային տնտեսագիտական համալսարանի ՊԵՏԱԿԱՆ ԴԻՊԼՈՄ՝ Ուկրաինայի կրթության եւ գիտության նախարարության կողմից, որը ճանաչվում է աշխարհի 82 երկրներում: Դիպլոմը համապատասխանում է Եվրոպական չափանիշներին:

**Ստանալով Տերնոպոլի պետական ազգային տնտեսագիտական համալսարանի դիպլոմ՝ Վրաստանի քաղաքացիները կարող են ուսումը շարունակել Վրաստանի ցանկացած պետական ԲՈՒՀ-ի մագիստրատուրայում՝ առանց ընդունելության պետական քննություններին մասնակցելու, այլ հանձնելով միայն ներբուհական մեկ քննություն:**

Ինստիտուտի լավագույն ուսանողները հնարավորություն ունեն՝ մեկ կիսամյակ անվճար ուսում ստանալ Լեհաստանի Կրակովի պետական տնտեսագիտական համալսարանում, որտեղ կհատկացվի անվճար հանրակացարան:

Վրաստանի քաղաքացիների համար՝ ինստիտուտում կազմակերպվում են ֆակուլտատիվ դասընթացներ՝ «Վրացերեն լեզու» առարկայից:

Ցանկացողներին տրամադրվում է հանրակացարան:

***Մասնաճյուղի հասցեն՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երեւան, Ավան, Աճառյան 31: Հեռ.՝ (+374 10) 61-22-02, 62-29-59***

***www.eftneu.am, www.tneu.edu.ua***

***e-mail: erfiltanx@yahoo.com***

# ՀԱՐՑ - ՊԱՏԱՍԽԱՆ ❋ ԱՅԼԱԶԱՆ ❋ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

## ԻՆՉՊԵՍ ՆՎԱԶԵՑՆԵԼ ԻՆՍՈՒԼՏՈՎ ՀԻՎԱՆԴԱՆԱԼՈՒ ՎՏԱՆԳԸ



*Կարծում եմ՝ շատերը կհամաձայնվեն, որ ինսուլտը դարձել է ժամանակի չարիքը: Հետաքրքիր է՝ գիտնականները կարողացե՞լ են, արդյոք, պարզել, թե ինչպե՞ս է հնարավոր կանխել այն:*

*Վ.Վարդապետյան*

*Ծալկա*

Գիտնականները պատմել են՝ ինչպես կարելի է նվազեցնել ինսուլտով հիվանդանալու վտանգը:

Եյլի համալսարանի գիտնականները պարզել են, որ սննդի մեջ անդրաճարպերի մեծ պարունակությամբ մթերքների գործածումից հրաժարումը թույլ է տալիս նվազեցնել ուղեղի կաթվածի ու սրտի նոպայի առաջացման վտանգը: Այդ մասին, հաղորդվում է համալսարանի պաշտոնական կայքում:

Հետազոտողներն այս եզրակացություններին են հանգել այն վիճակագրության ուսումնասիրության հիման վրա, որն արտացոլում է 2002-ից մինչեւ 2013 թվականն ընկած ժամանակահատվածում, Նյու Յորքի նահանգում, մարդկանց հոսպիտալացումը: Այն վայրերում, որտեղ մարդիկ սահմանափակել են անդրաճարպերի գործածումը, սրտի նոպայով եւ ուղեղի կաթվածով հիվանդների է:

«Սննդաբաժնից անդրաճարպերի բացառումը կարող է զգալիորեն նվազեցնել ուղեղի կաթվածի ու սրտի նոպայի առաջացման վտանգը... Պետական մակարդակով անդրաճարպերի արգելքը կարող է իսկական հաղթանակ դառնալ միլիոնավոր մարդկանց համար»,- հայտարարել է հետազոտության հեղինակներից մեկը. հաղորդել է «ՌԻԱ Նովոստին»:

ՀԵՏԱՔՐՔԻՐ Է

## ՁՎԻ ՆՈՐ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ



***Ամերիկացի բժիշկները հավի ձվի նոր օգտակար հատկություն են հայտնաբերել. դրա գործածումը նպաստում է կրտսեր տարիքի երեխաների աճին եւ նրանց զարգացման դանդաղումների նվազեցմանը:***

Համապատասխան հետազոտությունը հրապարակված է Pediatrics հանդեսում, դրա մասին հակիրճ հաղորդել է Սենտ Լուիսի Վաշինգտոնի համալսարանը (Միսուրիի նահանգ, ԱՄՆ):

Գիտնականների գնահատումների համաձայն, ձու գործածելիս օրգանիզմի զարգացումը բարելավվում է միջին հաշվով 1,47 անգամ՝ այն դեպքերի համեմատությամբ, երբ այն չի օգտագործվում սնունդ պատրաստելիս:

Հեղինակները նման եզրակացությունների են հանգել՝ կատարելով ռանդոմիզացված վերահսկվող հետազոտություն: Դրան մասնակցել են վեցից մինչեւ ինն ամսական էկվադորցի երեխաներ, որոնք վեց ամսվա ընթացքում օրական մեկ ձու են կերել:

ԳԻՏԵ՞Ք, ԱՐԴՅՈՔ...

## ՈՐՆ Է ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԱԿԵՂՏՈՏ ՎԱՅՐԸ



***Խաղաղ օվկիանոսի Հենդերսոն ոչ մեծ անմարդաբնակ կղզին դարձել է մոլորակի ամենակեղտոտ վայրը: Այդ եզրակացության ենք հանգում՝ ԱՄՆ-ի Գիտությունների ազգային ակադեմիայի հրապարակած զեկույցում:***

Փաստաթղթի համաձայն, որը համատեղ պատրաստվել է Թասմանիայի համալսարանի եւ Մեծ Բրիտանիայի թռչունների պաշտպանության թագավորական ընկերության մասնագետների կողմից, Հենդերսոն անմարդաբնակ կղզում, որը գտնվում է Խաղաղ օվկիանոսում՝ Նոր Զելանդիայի եւ Լատինական Ամերիկայի ափերի միջեւ, գրանցվել է մեկ քառակուսի մետրի վրա աղբի ամենամեծ կուտակումը: Մասնագետների հաշվարկների համաձայն, աղտոտման խտությունը մեկ քառակուսի մետրի վրա կազմում է 671 օբյեկտ: Կղզու տարածքը կազմում է 4,3 հեկտար:

Ուսումնասիրողները պարզել են, որ օբյեկտների ընդհանուր թիվը, որոնք հայտնվել են կղզու վրա, հասնում է մոտավորապես 37,7 միլիոնի: Աղբի ընդհանուր զանգվածը, մասնագետների գնահատումներով, կազմում է 17,6 տոննա: Դրա հետ մեկտեղ, 10 մետր լայնությամբ լողափին հայտնվում է օրական միջին հաշվով 27 նոր օբյեկտ:

Հրապարակման հեղինակներն ընդգծում են, որ այս իրադրության պատճառը դարձել է պլաստիկի արտադրության կտրուկ աճը՝ անցյալ դարի երկրորդ կեսին:

ՀՈԳԵԲԱՆԻ ԽՈՐՀՈՒՐԴ

## ՃԻՇՏ ԿԱԶՄԱԿԵՐՊԵՔ ՁԵՐ ՀԱՆԳԻՍՏԸ

*Մենք բոլորս տարբեր ենք, միմյանցից տարբեր բնավորություններով, կյանքի հանդեպ մեր մոտեցումներով, եւ հետեւաբար մենք ունենք միմյանցից տարբեր աշխատանքի եւ հանգստի կազմակերպման մեր ուրույն ցանկությունները:*

*Կա կարծիք, որ եթե ուզում ես հանգիստն անցնի լիարժեք, ապա այն պետք է անցկացնել ակտիվ ու հետաքրքիր:*

*Հանգիստը ձեր տպավորություններն են, այլ ոչ թե ձեր հանգստությունը:*

*Իսկ ինչպե՞ս եք դուք անցկացնում ձեր արձակուրդները եւ, արդյոք, հանգստից հետո՝ դուք զգո՞ւմ եք ուժերի կուտակում՝ պատրա՞ստ եք անցնել աշխատանքի, թե՞ այլեւս աշխատելու ցանկություն չեք ունենում:*

Կարեւոր է հիշել, որ հանգիստը ոչ թե շքեղություն ու շռայլություն է, այլ անհրաժեշտություն, ցանկացած աշխատող կամ սովորող մարդ ոչ միայն իրավունք ունի, այլեւ պարտավոր է՝ հանուն իր հոգեկան եւ ֆիզկական հանգստի, տարին առնվազն երկու անգամ, արձակուրդ ունենալ, եւ լիիրավ վայելել այդ արձակուրդը: Սակայն, կան մարդիկ, որ այնքան շատ են կարեւորում աշխատանքը, որ բավարարվում են շաբաթ-կիրակի օրերի հանգստով: Ասեմ ավելին, ոչ միայն 2 օրը, ոչ միայն 5 օրը, այլ նույնիսկ մեկ շաբաթը բավարար չէ հանգստանալու համար: 5 կամ 6 օրը ուղղակի ընդմիջում է, կարելի է ասել՝ փոքր միջավայրը կամ օդը փոխելու: Իրական արձակուրդը դա չէ, այն պետք է առնվազն տեւի 2 շաբաթ, իսկ ավելի լավ կլինի՝ մեկ ամիս: Այսօր շատերը վախենում են երկարատեւ արձակուրդ ունենալուց, մտածում են, որ կկորցնեն իրենց աշխատանքը: Բայց մտածեք. մի՞թե մենք ծնվել ենք միայն աշխատելու, ուտելու, քնելու, գնումներ անելու, իսկ հետո՝ բողոքելու համար: Մի՞թե ճիշտ է, արձակուրդ գնալիս, անպայման վերցնել նոութբուքն ու հեռախոսը, որպեսզի աջակուրջ հետեւել բոլոր նորություններին ու նույնիսկ այդ ժամանակ մտածել աշխատանքի մասին: Այդպես ձեր նյարդային համակարգը չի հասցնի հանգստանալ: Հոգեբանորեն մեր օրգանիզմը արձակուրդային հանգիստ վիճակի է անցնում միայն արձակուրդի 4-5-րդ օրը, իսկ այդ 4-5 օրը կարելի է համարել նախահանգստյան շրջան, իսկ եթե ձեր արձակուրդը 7 օր է, նշանակում է՝ դուք հանգստացել եք ընդամենը 2 օր: Իրականում, լիարժեք հանգստանալը այնքան էլ հեշտ գործ չէ, քանի որ դեպրեսիան ու մեղքի զգացումը սկսում են անհանգստացնել շատ շատերի: Ոմանց մոտ խուճապ է սկսվում, չավարտված գործերի հանգիստն արագ անցկացնելու ու շուտափույթ աշխատանքի վերադառնալու մտքերն անգիտակցորեն իհայտ են գալիս ու փչացնում ամեն ինչ: Կարդալով այս ամենը՝ գուցե արժե մի պահ դադար տալ, մտածել ու ժպտալ հասկանալով, որ կարեւորը հանգստի մեջ ձեր մտքերին խաղաղություն տալն է, գործնական մտքերի վրա չկենտրոնանալը: Ավելի լավ կանեք, եթե կենտրոնանաք ծովի ալիքների հաճելի ձայնը լսելու եւ արեւածագն ու արեւամուտը նկատելու եւ վայելելու վրա: Ու հիշե՛ք, որ բացարձակ կարեւոր չէ, թե դուք որտեղ եք անցկացնում ձեր արձակուրդները: Դա կլինի Իսպանիան, Բրազիլիան, թե ձեր տունը, կարեւոր չէ, կարեւոր է՝ ինչպես: Ամերիկացի հոգեբաններն առաջարկում են 6 պրակտիկ խորհուրդ՝ արձակուրդները լիարժեք վայլելու համար.



**1.** Ինչպես նշվեց վերեւում՝ կարեւորը երկարատեւ հանգիստ վայելելն է, որպեսզի ձեր օրգանիզմը հասցնի հագստանալ:

**2.** Ամեն օր մի նոր բան փորձեք - եթե դուք ամեն օր գնաք լողափ կամ ամեն օր լողավազան հաճախեք, ապա շատ շուտ կձանձրանաք, իսկ եթե ամեն օրը մի հետաքրքիր նոր բան փորձեք, ապա ձեր արձակուրդը ձեզ ավելի երկար կթվա, եւ ձեր հիշողություններն է՛լ ավելի շատ կլինեն:

**3.** Փորձեք ամեն տարի տարբեր տեղերում անցկացնել արձակուրդը - իհարկե, շատերը սիրում են գնալ հանգստանալու իրենց հարազատ վայրերը կամ որպես հանգստի լավագույն տարբերակ նախընտրում են իրենց տունը, բայց եթե կա նման հնարավորություն, լավ կլինի փոխել հանգստավայրը:

**4.** Այդքան մի տարվեք նկարվելով - ոմանց համար հանգիստն ու ֆոտոն անբաժանելի մասնիկներ են, իհարկե, արժի հիշարժան վայրերն ու օրերը նկարել, բայց ոչ ամեն ինչ ու ամեն քայլը, փորձեք որոշ հիշողությունների համար օգտագործել ձեր տեսողությունն ու լսողությունը:

**5.** Ապրեք ամեն մի օրով ու վայելեք ամեն մի ակնթարթը - մի սպասեք շատին, մի տխրեք, որ ձեզ այս տարի չհաջողվեց Փարիզում անցկացնել արձակուրդը, այլ փորձեք իմաստավորել եւ հետաքրքիր դարձնել այն, ինչ ունեք դուք հենց այդ պահին:

**6.** Կտրվեք աշխատանքից, մի թողեք, որ աշխատանքային որեւէ հարց անհանգստացնի ձեզ արձակուրդի ընթացքում: Դա է հանգստի կարեւոր կողմերից մեկը, քանի որ ցանկացած պահի որեւէ աշխատանքային խնդիր կարող է ձեզ սթրեսի ենթարկի, եւ դուք՝ ձեզ հետ տանեք սթրեսացված հիշողություններ:

Վայելեք ձեր արձակուրդային ամեն օրը, դարձրեք այն անկրկնելի ու հետաքրքիր:

Հիշե՛ք, ձեր տպավորությունները դառնալու են երկարատեւ հիշողություն, եւ թող որ այդ հիշողությունները լինեն զվարթ, կենսախինդ:

## ԱՆԵԿԴՈՏՆԵՐ

*☺ Երկու ընկերուհի նստած կոֆե են խմում, հանկարծ մեկն ասում ա.*

*- Լսի, երեկ գիշեր մարդս ըտենց էլ չեկավ տուն, կարողա՞ գնացել ա լեւի:*

*- Ախչի, հո դու դեբիլ չես, խի՞ ես ըտենց վատ-վատ բաների մասին մտածում, կարողա ընգել ա ավտոյի տակ:*

*☺ Փոքրիկ տղային հարցնում են:*

*- Ո՞ւմ ես ավելի շատ լսում՝ մամայի՞ն, թե՞ պապային:*

*- Մամային:*

*- Ինչո՞ւ:*

*- Ինքը ավելի շատ ա խոսում:*

*☺ Փոքրիկ տղան աղմկելով «շրջագայում է» իրենց տանը:*

*- Բալես, ի՞նչ ես անում,- հարցնում է մայրը:*

*- էն խաղն եմ խաղում, որ պապան ա ամեն առավոտ խաղում:*

*- Էդ ի՞նչ խաղ ա:*

*- Չգիտեմ, էստեղից-էնտեղ ա գնում, էնտեղից-էստեղ ու՝ ջղայնացած գոռում՝ «ո՞ւր ա իմ փողկապը, ո՞ւր ա իմ փողկապը»:*

*☺ Մեկը գնում ա ընկերոջ տուն, տեսնում ա՝ ընկերը զոքանչին ուսերին դրած այգում ման ա գալիս:*

*- Էս ի՞նչ ես անում:*

*- Հե՛չ, ծառերն եմ սրսկում:*

*☺ Քահանան.*

*- Ուտելուց առաջ աղոթո՞ւմ ես, որդյակս:*

*- Ոչ, տեր հայր: Իմ կինը լավ խոհարար է:*

*☺ Տղամարդը գնում է հեռավոր բարեկամին հյուր: Սա տանում է այգին ցույց տալու: Շրջում են այգով, տեսնում է մի ծառի ճյուղերին բազմագույն ժապավեններ են կապած, ծառի բնին՝ ոսկետառ ցուցանակ: Հարցնում է.*

*- Սա ի՞նչ է*

*- Բա չիմացա՞ր, զոքանչս էս ծառից էր կախվել:*

*- Ինչ կլնի՜, մի երկու շիվ տուր, տանեմ մեր ծառերն էլ պատվաստեմ:*

ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

# ԸՆԴՈՒՆՎԵՑ ՀԱՄԱՏԵՂ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՎԵՑԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐ

*Հունիսի 14-15-ին, Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի հրավերով, պաշտոնական այցով Հայաստանում էր գտնվում Տաջիկստանի նախագահ Էմոմալի Ռահմոնը:*



Օդանավակայանից Տաջիկստանի նախագահն այցելեց Ծիծեռնակաբերդի հուշահամալիր՝ ծաղկեպսակ դրեց Հայոց մեծ եղեռնի զոհերի հուշարձանին եւ հարգանքի տուրք մատուցեց Ցեղասպանության անմեղ զոհերի հիշատակին:

Հայաստանի նախագահի նստավայրում տեղի ունեցած դիմավորման պաշտոնական արարողությունից հետո՝ կայացավ նախագահներ Սերժ Սարգսյանի եւ Էմոմալի Ռահմոնի առանձնազրույցը, ապա անցկացվեցին ընդլայնված կազմով բանակցություններ՝ երկու երկրների պատվիրակությունների մասնակցությամբ:

Բարձր մակարդակի բանակցությունների արդյունքներով՝ ընդունվեց համատեղ հայտարարություն, նաեւ ստորագրվել են Հայաստանի եւ Տաջիկստանի միջեւ մի շարք ոլորտներում երկկողմ համագործակցության խորացմանն ուղղված փաստաթղթեր:

Սերժ Սարգսյանը եւ Էմոմալի Ռահմոնը հանդիպման արդյունքներն ամփոփել են զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչների առջեւ հայտարարություններով:

# ՀԱՅԱՍՏԱՆ-ՆԱՏՕ. ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ՎՍՏԱՀՈՒԹՅԱՆ ԵՎ ՓՈԽԸՄԲՌՆՄԱՆ ՄԹՆՈԼՈՐՏՈՒՄ



*Հունիսի 13-ին, Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը հանդիպում ունեցավ Կովկասում եւ Կենտրոնական Ասիայում ՆԱՏՕ-ի Գլխավոր քարտուղարի հատուկ ներկայացուցիչ Ջեյմս Ապաթուրայի հետ:*

ՆԱՏՕ-ի Գլխավոր քարտուղարի հատուկ ներկայացուցիչը, հանդիպման սկզբում, կազմակերպության անունից երախտագիտություն է հայտնել Հայաստանին՝ Աֆղանստանում եւ Կոսովոյում խաղաղության հաստատման գործողություններին մասնակցության եւ միջազգային խաղաղապահ առաքելություններին ունեցած ներդրման համար, ընդգծելով, որ Հայաստան-ՆԱՏՕ հարաբերություններն այս տարիներին զարգացել են վստահության եւ փոխըմբռնման մթնոլորտում:

Հանդիպմանը՝ հյուրի խնդրանքով, Սերժ Սարգսյանը ներկայացրեց, Սահմանադրության փոփոխություններից հետո, Հայաստանում պետական կառավարման նոր համակարգին անցնելու գործընթացը եւ բարեփոխումների կարեւորությունը, ԼՂ հիմնախնդրի կարգավորման ուղղությամբ զարգացումներն ու իր գնահատականներն իրավիճակին: Անդրադարձ եղավ նաեւ տարածաշրջանի խնդիրներին եւ՝ անվտանգության տեսանկյունից մարտահրավերներին:

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՆԱ-Ի ԱՃԸ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿՈՒՄ ԿԱԶՄԵԼ Է 6.5 ՏՈԿՈՍ

*Հայաստանի ՀՆԱ-ի աճը, ընթացիկ տարվա առաջին եռամսյակում, կազմել է 6,5 տոկոս: Հունիսի 16-ին, լրագրողների հետ հանդիպմանը, այս մասին ասաց Հայաստանի ֆինանսների նախարար Վարդան Արամյանը:*

- Ես կարծում եմ, որ սա բավականին լավ ցուցանիշ է՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ տարվա համար մենք թիրախավորել ենք 3.2 տոկոս ՀՆԱ-ի աճ եւ բազմիցս կրկնել ենք, որ 3.2 տոկոսն այն նվազագույն շեմն է, որին ձգտելու ենք հասնել,- նշեց նախարարը:

ՀՆԱ-ի աճին հիմնականում նպաստել են արդյունաբերության, ծառայությունների եւ առեւտրի ճյուղերը: - 2017թ. հունվար-ապրիլին, Հայաստանի տնտեսական ակտիվության ցուցանիշը, կազմել է 5.7 տոկոս: Տնտեսական ակտիվությանը եւս հիմնականում նպաստել են արդյունաբերության, ծառայությունների ճյուղերը: Առաջիկա ամիսներին տնտեսական ակտիվության ցուցանիշների էական նվազում մենք չենք ակնկալում,- հայտնեց նախարարը:

Արտահանումը շարունակում է դրսեւորել առաջանցիկ աճ ներմուծման նկատմամբ: Վարդան Արամյանի խոսքով, հինգ ամիսների ընթացքում գրանցվել է 16 տոկոսից մի փոքր ավելի արտահանման ցուցանիշ, իսկ ներմուծման ցուցանիշը կազմել է 14 տոկոսից մի փոքր ավելի: Սա նշանակում է, որ արտահանման ցուցանիշը շարունակում է ավելի արագ աճել, քան ներմուծման ցուցանիշը:



# ՀՈՒՇ-ԾԵՐԵԿՈՒՅԹ՝ ՆՎԻՐՎԱԾ ԼՈՒՍԻՆԵ ԶԱՔԱՐՅԱՆԻ ՀՈԲԵԼՅԱՆԻՆ

*Հայաստանի ազգային գրադարանի դահլիճում կայացավ հանրաճանաչ օպերային երգչուհի, ծնունդով Ախալցիխեից Լուսինե Զաքարյանի ծննդյան 80-ամյակին նվիրված հոբելյանական հուշ-ցերեկույթ:*

Հուշ-ցերեկույթի ընթացքում ելույթ ունեցան սոպրանո, Հայաստանի վաստակավոր արտիստուհի Իրինա Զաքյանը եւ դաշնակահար Արմեն Աղաջանյանը:

Կոմիտասի հայ հոգեւոր երգերի ու տաղերի կատարող Լուսինե Զաքարյանը ծնվել է 1937 թվականի հունիսի 1-ին, Ախալցիխեում: Ժողովրդի կողմից շատ սիրված երգչուհու աճյունը գտնվում է Էջմիածին քաղաքի՝ Սուրբ Գայանե եկեղեցու բակի գերեզմանատանը: 1972 թվականին երգչուհին արժանացել է ՀԽՍՀ ժողովրդական արտիստի կոչման:

# «ՀԱՄՈՎ-ՀՈՏՈՎ ԵՐԵՎԱՆ»

*«Երեւանյան ամառ-2017» եռամսյա միջոցառումների ծրագրի շրջանակներում՝, արդեն 3-րդ տարին է, անընդմեջ անցկացվում է տոնածիսական ուտեստների՝ «Համով-հոտով Երեւան» փառատոնը: Այն կազմակերպվել է Երեւանի քաղաքապետարանի՝ տուրիզմի բաժնի եւ «Հայ խոհարարական ավանդույթների զարգացման եւ պահպանման» հասարակական կազմակերպության համատեղ ջանքերով:*



Միջոցառմանը ներկա են եղել նաեւ բազմաթիվ զբոսաշրջիկներ, որոնց համար փառատոնը դարձել է բացահայտումների ու հիացմունքների երեկո:

Փառատոնի ընթացքում ներկայացվել են տաղավար տոներն իրենց ավանդական ուտեստներով, այդ թվում՝ Նավասարդ, Բուն բարեկենդան, Սուրբ Սարգիս, Համբարձման տոն, Վարդավառ, Խաչվերաց, Սուրբ Ծնունդ, Ծաղկազարդ, Տեառնընդառաջ եւ այլ տոներ, ինչպես նաեւ՝ հայկական արտադրության գինիներ, տիկնիկներ ու կարպետներ:

Միջոցառման ողջ ընթացքն ուղեկցվել է հայկական ազգային երգ ու պարով, որին մասնակցել են ոչ միայն համույթներն ու մենակատարները, այլեւ՝ բոլոր հյուրերը:

Այս տարի, փառատոնի շրջանակում, առաջին անգամ անցկացվել է խոհարարական մրցույթ, որի շրջանակում տաղավարները ներկայացրել են իրենց պատրաստած աղցանները, եւ ժյուրիի կողմից ընտրված լավագույնը ստացել է «Երեւանյան աղցան» անվանումը:

Փառատոնի ավարտին, բոլոր մասնակիցներին, Երեւանի քաղաքապետ Տարոն Մարգարյանի կողմից հանձնվել են շնորհակալագրեր՝ ակտիվ մասնակցության համար:

## ՀԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔ՝ ԱՆԴՐԱՆԻԿ ՄԱՐԳԱՐՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ



*Պետական, քաղաքական գործիչ, նախկին վարչապետ Անդրանիկ Մարգարյանի ծննդյան օրվա կապակցությամբ՝ նախագահ Սերժ Սարգսյանը, հունիսի 12-ին, Հանրապետության բարձրագույն ղեկավարության ուղեկցությամբ, այցելել է Կոմիտասի անվան այգու պանթեոն՝ հարգանքի տուրք մատուցել անվանի գործչի հիշատակին:*

## ԵՐԵՎԱՆԻ ՆՈՐԸՆՏԻՐ ԱՎԱԳԱՆԻՆ ԱՆՑԿԱՑՐԵՑ ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏԸ

*Երեւանում աշխատանքն սկսեց Հայաստանի մայրաքաղաքի 3-րդ գումարման ավագանու՝ առաջին նստաշրջանի առաջին նիստը: Նիստում ընտրվեցին Ավագանու մշտական հանձնաժողովների նախագահները, նաեւ սահմանվեց՝ Երեւանի ընտրված քաղաքապետ Տարոն Մարգարյանի երդմնակալության արարողության կարգը:*

*Հունիսի 12-ին, Երեւանի Ավագանու հատուկ հրավիրված նիստում, կայացավ քաղաքապետ Տարոն Մարգարյանի երդմնակալության պաշտոնական արարողությունը:*

*Արարողությանը ներկա էր եւ ելույթ ունեցավ Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը: Նախագահը շնորհավորել է Տարոն Մարգարյանին, Երեւանի նորընտիր ավագանու բոլոր անդամներին՝ Հայաստանի մայրաքաղաքի կառավարման պատասխանատվությունը ստանձնելու կապակցությամբ:*

## ՍՏՈՐԱԳՐՎԵՑ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

*Թեհրանում, հունիսի 14-ին, կքնվել է «Հայաստանի տնտեսական զարգացման եւ ներդրումների նախարարության եւ ԻԻՀ ստանդարտների եւ արդյունաբերական հետազոտությունների ինստիտուտի միջեւ համագործակցության մասին» փոխըմբռնման հուշագիր:*

*Հուշագրով նախատեսվում է երկու մարմինների միջեւ համագործակցության զարգացում եւ ընդլայնում հետեւյալ ուղղություններով՝ սննդի եւ ոչ ոգելից խմիչքների ոլորտի իրավական դաշտի վերաբերյալ տեղեկատվության փոխանակում, «հալալ» ստանդարտի վրա հիմնված ապրանքների հսկողության վերաբերյալ դասընթացների, աուդիտի իրականացում, երկու կողմերի շուկաների վերաբերյալ տեղեկատվության փոխանակում, համատեղ նախագծերի իրականացում, Հայաստանի տարածքում ԻԻՀ «հալալ» ստանդարտ մակնիշման տրամադրում, «հալալ» արտադրանքի հավաստագրման ընթացակարգերին առնչվող տեղեկատվության փոխանակում եւ այլն:*

## ՏԱՐԱԴՐԱՄԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿՈՒՐՍԸ

(16 հունիսի)

*Հայաստանի Ազգային բանկի կողմից սահմանվել է տարադրամի փոխանակման հետեւյալ կուրսը.*

| ՏԱՐԱԴՐԱՄ | ԱՌՔ | ՎԱՃԱՌՔ |
|---|---|---|
| ԱՄՆ ԴՈԼԱՐ | 479,80 | 482,80 |
| ԵՎՐՈ | 532,50 | 539,00 |
| ՌՈՒԲԼԻ | 8,22 | 8,42 |

*Հունիսի 9-ի համեմատությամբ, ԱՄՆ դոլարի կուրսը նվազել է 2 դրամով:*

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

## ՀՈՒՆԻՍ



***17.06.2017. Սուրբ Գրիգոր Լուսավորչի ելքը Վիրապից***

301 թվականին Սուրբ Գրիգոր Լուսավորչի՝ Խոր Վիրապից դուրս գալու հիշատակության օրն է, որն սկիզբ դարձավ հայոց մեծ դարձի: Տոնական այդ օրը բոլոր եկեղեցիներում մատուցվում է Սուրբ Պատարագ:

***18.06.2017. Տոն Կաթողիկե Սուրբ Էջմիածնի***

Հայոց եկեղեցու մեծ տոներից է Սբ. Գրիգոր Լուսավորչի տեսիլքով Կաթողիկե Սբ. Էջմիածնի հիմնադրման տոնը:

Ըստ ավանդության՝ Խոր Վիրապի բանտարկությունից դուրս գալուց հետո, Սբ. Գրիգոր Լուսավորիչը տեսնում է նշանավոր տեսիլքը, ուր Միածինը, ողողված հրաշափառ լույսով, իջնում է երկնքից եւ ոսկե ուռով զարկում Սանդարամետի գետնափոր մեհյանին՝ ցույց տալով այն տեղը, ուր պետք է կառուցվեր հայոց սուրբ հավատի տաճարը: Այստեղից էլ առաջացել է «Էջմիածին» անունը, այսինքն՝ էջ՝ (գրաբար) իջավ Միածինը: Սբ. Գրիգոր Լուսավորիչն իր տեսիլքը պատմում է հայոց Տրդատ թագավորին: Արքայի հովանավորությամբ, կառուցվում է Սբ. Էջմիածնի՝ Աստվածածնին նվիրված Կաթողիկե Մայր Տաճարը: Քրիստոսի իջման տեղում էլ կառուցվում է Իջման Սբ. Սեղանը:

***20.06.2017. Հիշատակ Սուրբ. Նունե եւ Մանե կույսերի***

***22.06.2017. Սուրբ Իսահակ եւ Հովսեփ իշխանների եւ Սարգիս եւ Բագոս վկաների հիշատակության օր***

# ՕԾՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ԱԽԱԼՔԱԼԱՔԻ ԼՈՄԱՏՈՒՐՑԽ ԵՎ ԴԱԴԵՇ ԳՅՈՒՂԵՐՈՒՄ



«Սուրբ Փրկիչ» եկեղեցի

***Հունիսի 11-ին, Ախալքալաքի մունիցիպալիտետի 350 բնակիչ ունեցող Լամատուրցխ գյուղում, անցկացվեց տեղի «Սուրբ Փրկիչ» եկեղեցու վերաօծման արարողությունը: Իսկ նախօրյակին՝ հարեւանությամբ Դադեշ գյուղում անցկացվեց «Սուրբ Աստվածածնի», վերակառուցման ընթացքում գտնվող, եկեղեցու գմբեթի եւ զանգակատան խաչերի ու զանգի օծման կարգը:***

Լոմատուրցխ գյուղի «Սուրբ Փրկիչ» եկեղեցու վերաօծումն անցկացվեց եկեղեցու առաջին օծումից 111 տարի անց: Սեդրակ եւ Արթուր Խաչատրյան եղբայրները, կատարելով իրենց ծնողների՝ Վարդ եւ Նունուֆար Խաչատրյանների պատգամը, 2016 թվականին վերականգնեցին խորհրդային տարիներին իր գլխավոր գործառույթներից զրկված եկեղեցին:

Լոմատուրցխ գյուղի «Սուրբ Փրկիչ» եկեղեցու վերաօծման եւ Դադեշ գյուղի՝ վերակառուցման ընթացքի մեջ գտնվող «Սուրբ Աստվածածին» հին եկեղեցու գմբեթի ու զանգակատան խաչերի եւ զանգի օծման արարողությունը, կատարվեց ձեռամբ Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանի եւ մասնակցությամբ Սամցխե-Ջավախեթիի եւ Ծալկայի ընդհանուր առաջնորդական փոխանորդ Հոգեշնորհ Տեր Բաբգեն վարդապետ Սալբիյանի, Ախալքալաքի եւ հարակից գյուղերի հոգեւոր հովիվ Արժանապատիվ Տեր Տաթեւ քահանա Մարուքյանի:



«Սուրբ Աստվածածին» եկեղեցի

Օծման արարողությանը ներկա էին Վրաստանի խորհրդարանի պատգամավոր Սամվել Մանուկյանը, Տորոնտոյի «Սուրբ Երրորդություն» եկեղեցու ծխական խորհրդի ատենապետ Օհան Օհանիսյանը, հյուրեր Վրաստանից եւ Հայաստանից:



Կյանքի 94-րդ տարում մահացել է Երկրորդ համաշխարհային պատերազմին մասնակից, Ասպինձայի շրջանի ամենատարեց վետերաններից մեկը՝ դամալացի Սերգո Տոնականյանը:

Սերգո Մամբրեի Տոնականյանը ծնվել է 1924 թվականի հունվարի 24-ին, Դամալա գյուղում: Ավարտել է Դամալայի 8-ամյա դպրոցը: 1943 թվականի սկզբին զորակոչվել է բանակ, մասնակցել՝ Երկրորդ համաշխարհային պատերազմին:

Վերադառնալով գյուղ՝ ամուսնացել է Եկատերինա Դարբինյանի հետ եւ ունեցել 6 երեխա՝ 3 տղա, 3 աղջիկ (16 թոռ, 35 ծոռ): Աշխատել է Ասպինձայի շրջանի կապի բաժանմունքում՝ որպես հեռախոսակապեր վերանորոգող, իսկ այնուհետեւ՝ փոստատար ու կապի բաժանմունքի գլխավոր գանձապահ՝ մինչեւ 2002 թվականը:

Դամալա գյուղի հասարակությունը խորին ցավակցություն է հայտնում Սերգո Տոնականյանի ընտանիքին, հարազատներին ու մերձավորներին:

***Դամալացիների անունից՝ ՆԵԼԼԻ ԴՈՒԴՈՒԿՉՅԱՆ***



Ախալքալաքի մունիցիպալիտետի Մերենիա գյուղի հասարակությունը խոր վշտով ընկալեց համագյուղացի, Երեւանի ոստիկանության կրթա-համալիրի ամբիոնի պետ, ոստիկանության գնդապետ Մամբրե Նազարյանի մոր՝

***Ֆենյա ՆԱԶԱՐՅԱՆԻ***

մահը եւ ցավակցում է հանգուցյալի հարազատներին ու բարեկամներին:

Թբիլիսիի թիվ 104 հանրային դպրոցի մանկավարժական կոլեկտիվը խորապես ցավակցում է դպրոցի հայոց լեզվի եւ գրականության ուսուցչուհի Կարինե Հովհաննիսյանին՝ սիրելի ամուսնու՝

***Վարդան Պողոսի ԻՐԻՑՅԱՆԻ***

մահվան կապակցությամբ:

Թբիլիսիի թիվ 104 հանրային դպրոցի մանկավարժական կոլեկտիվը զորակցում է դպրոցի վրաց լեզվի եւ գրականության ուսուցչուհի Լալի Ջավախիձեին՝ մոր՝

***Լենորա Վալերիանի ՋԱՎԱԽԻՁԵԻ***

վախճանի կապակցությամբ:



## ԽԱՉԲԱՌ

***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 7.Թբիլիսիի Խոջիվանքի գերեզմանատանը թաղված գրող Պերճ ...: 9.Մարտական թունավոր գազ: 10.Անգլիական պար: 11.Միեւնույն մտքի: 13.Կրոն, որի հիմքը Ղուրանն է: 16.Ակսել Բակունց. «... Մարգար»: 17.Շիաների սուրբ քաղաք Իրանում: 19.Փոքրիկ խանութ: 22.Հմտություն, շնորհք: 24.XVIII-XIX դդ. քաղաքային ինքնավարության մարմին Եվրոպայի մի շարք երկրներում: 25.Պատահար, միջադեպ: 27.Ռուսական ժողովրդական բանահյուսության ժանրերից: 29.Գերմանացի նշանավոր հրուշակագործ եւ համանուն ընկերության հիմնադիր: 32.Մեծ ռուս կոմպոզիտոր ... Չայկովսկի: 33.Պետություն Աֆրիկայի արեւելքում՝ համանուն թերակղզու վրա: 35.... տեղին: 38.Մաշկի վարակիչ հիվանդություն: 40.«... եւ Պոժարսկի»: 41.Խաղողի թանձր հյութ: 44.Ֆրանսիացի երգչուհի ... Պիաֆ: 47.Մուտք, ելումուտ անելու բացվածք: 48.Որեւէ բանի մաս, հատված: 50.481թ. ճակատամարտի վայր (գյուղ.): 51.Կինոդերասան ... Մերֆի: 52.Մեսրոպյան այբուբենի տառ: 53.Հմայություն, բախտ, գուշակություն: 54.Շիջած, հանգած: 55.Մակաբույծ միջատ:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 1.Ուժգին ձայնով կաղկանձել (գայլերի, շների եւ այլ կենդանիների մասին): 2.Խեղճ, ողորմելի: 3.Ոտնաման: 4.Հանրահայտ երգիչ ... Մարտին: 5.Անորոշ դերբայ: 6.Էլեկտրականապես չեզոք նյութի մասնիկ, որը կազմված է դրական լիցք ունեցող միջուկից եւ բացասական էլեկտրոնային ամպից: 8.Շպրտում: 12.Գետ Գերմանիայում: 14.Մկանային օրգան, որի հիմնական գործառույթը մարմնի բոլոր օրգաններին եւ հյուսվածքներին արյան մատակարարումն է: 15.Միեւնույն անվամբ մարդիկ: 18.Հայ արձակագիր Մարկ ...: 19.Ցարական Ռուսաստանում ռազմական միջնակարգ դպրոցի սան: 20.Էլեկտրոտեխնիկան հեռակառավարելու սարք: 21.Սանրվածքի ձեւ: 23.Սպորտային հագուստ եւ պարագաներ արտադրող ընկերություն: 26.Փոքրերից մեծահասակներին դիմելու կոչական բառ: 28.Իսկապես, իրավ: 29.Ամերիկացի դերասան Քրիս ...: 30.«Ի խորոց ...»: 31.Հեղուկ, որ արտազատում է լյարդը եւ հոսեցնում 12-մատնյա աղիքի մեջ, մաղձ: 34.Իտալացի դերասանուհի, մոդել ... Բելուչի: 36.Ջրարջ: 37.Ջոկել, զատել: 39.Արական սեռի ներկայացուցիչ: 42.Աշկենազի հրեական ծագումով Գերմաներենի դիալեկտ, որով խոսում են աշխարհի տարբեր մասերում: 43.Ծաղկի արական օրգան: 45.Երաժշտական հարվածային գործիք: 46.Տանիքի ստվարաթուղթ: 48.«XX դարի հրաշագործ» աճպարար Էմիլ ...: 49.Արջնագռավ, ճայիկ:

***Կազմեց ԷԼԼԱ ԱԹԱԲԵԿՅԱՆԸ***

### ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 1.Էլդար: 4.Հասմիկ: 10.Իսպանիա: 12.Երիկամ: 14.Սրան: 15.Նատրիում: 18.Դրամ: 19.Նարե: 20.Նանա: 23.Ամեն: 25.Մանանա: 27.Արա: 29.Միլան: 31.Սար: 33.Ջարե: 34.Արես: 36.Ռոտարու: 38.Գանա: 39.Գրչի: 40.Դոհա: 42.Նատո: 44.Իրան: 45.Սոնա: 47.Ճավա: 48.Պարկ: 49.Սանձ: 52.Եկ: 54.Լոձ: 56.Լեյ: 58.Ռախսա: 59.Գոյ: 60.Ագարա: 61.Նոդար: 62.Մարգո:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 2.Լսիր: 3.Ավանդ: 4.Հասուն: 5.Ան: 6.Սիս: 7.Մարիետա: 8.Կռնատ: 9.Ռեհան: 11.Սարմեն: 13.Մարան: 16.Տամա: 17.Մարմարա: 21.Արիզոնա: 22.Ամարա: 24.Նա: 26.Անարգ: 28.Ածական: 30.Լատ: 31.Սանդրա: 32.Ռե: 35.Ստոր: 37.Ուրան: 38.Գիմ: 40.Դիաս: 41.Հայնե: 43.Ոսկե: 46.Անրի: 47.Ճոլա: 48.Պիծակ: 50.Այյուր: 51.Ջյուդո: 53.Կռան: 55.Ջգում: 57.Բաք:

Խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105
Գ.Աբոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge
E-mail: vrastan@caucasus.net

Գրանցման վկայական № 4 4 - 1439 «ԿՈԼՈՐ» հրատարակչություն

“ВРАСТАН”
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445